«ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԲՈՒԼԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՒ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ»

ՊԻԼՈՏԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԿ-ի համագործակցությամբ, ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան աջակցությամբ իրականացվող «Հանուն բուլինգից ազատ դպրոցի» շրջանակներում իրականացվում է «Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգերի ներդրման» պիլոտային ծրագիրը: Պիլոտային ծրագիրն իրականացվել է ծրագրի շրջանակներում մշակված և հրապարակված «Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգեր» ուղեցույցի վրա, որը ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի հունիսի 27-ի N1155-Ա/2 հրամանով երաշխավորվել է գործածության որպես ուսումնական նյութ: Ուղեցույցը հասանելի է էլեկտրոնային տարբերակով:

Պիլոտային ծրագիրն իրականացվել է **Երևանի Պեյո Յավորովի անվան թիվ 131, Յակոբ և Լուտովիկա Այնթապլեանների անվան թիվ 87 հիմնական դպրոցներում և Ավետիսյան դպրոցում (AMAA**, «Հայ կրթություն» կրթական հիմնադրամ կրթահամալիր): Փորձարկման նպատակն էր գործնականում ստուգել մեխանիզմների արդյունավետությունը: Փորձարկումն իրականացվել է դպրոցների տնօրենների, հոգեբանների և ուսուցիչների հետ պարբերաբար իրականացվող աշխատանքի միջոցով և «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի աշխատակիցների և փորձագետների ներգրավմամբ: Աշխատանքներն իրականացվել են երեք մակարդակներում՝ **դպրոցի, անձնակազմի և սովորողի մակարդակ** (գծապատկեր 1):

Ծրագիրն իրականացվել է երեք հիմնական փուլերով:

- **Առաջին փուլ՝ «Իրավիճակի վերլուծություն և գնահատում»:** Առաջին փուլում իրականացվել է բուլինգի վերաբերյալ սովորողների, ծնողների և մանկավարժական կազմի իրազեկվածության մակարդակի գնահատում, ինչպես նաև դպրոցներում վտանգավոր միջավայրերի բացահայտմանն ու երևույթի՝ դպրոցում տարածվածության մակարդակի բացահայտմանն ուղղված աշխատանքներ: Այս փուլում իրականացվել է նաև դպրոցներում բուլինգի դեպքերի առկայության գնահատում: Դպրոցներում բուլինգի տարածվածության, պատճառների և հետևանքների մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը իրականացվել է յուրաքանչյուր դպրոցի համար առանձին և օգնել է նրանց հետ հետագա ռազմավարական քայլերի պլանավորմանը:

- **Երկրորդ փուլ՝ «Կրթական միջավայրի բարելավում»**: Այս փուլում իրականացվել է նաև «**Բուլինգի կանխարգելման և արձագանքման հարցերով հանձնաժողովի» անդամների ընտրությունը:** Բոլոր երեք դպրոցներում ձևավորվել են բուլինգի կանխարգելման և արձագանքման համար պատասխանատու աշխատանքային խմբեր՝ Գնահատող և Արձագանքող, որոնցում ներգրավվել են դպրոցների

հոգեբանները, ուսուցիչները և սովորողները: Երկրորդ փուլում նախորդ փուլի արդյունքների հիման վրա իրականացվել են նաև քննարկումներ դպրոցների վարչակազմի հետ՝ վտանգավոր միջավայրերի փոխակերպմանն ուղղված հնարավոր քայլերի վերաբերյալ և բուլինգի արձանագրված դեպքերի արձագանքման մեթոդաբանությանն ուղղված: **Այս փուլում իրականացվել են կանխարգելիչ մեխանիզմների ներդրման հետ կապված** տարաբնույթ կանխարգելիչ և արձագանքող աշխատանքներ՝ սովորողների, ծնողների և ուսուցիչների գիտակցության բարձրացմանն ուղղված իրազեկող միջոցառումներ, վտանգավոր միջավայրերում աշակերտական հերթապահության սահմանում և այլն:

- **Երրորդ փուլ՝ մանկավարժական աշխատակազմի և սովորողների հզորացում**: Հունվար և փետրվար ամիսներին իրականացվում են դասընթացներ ուսուցիչների հետ, որոնք էլ իրենց հերթին՝ հոգեբանների աջակցությամբ շարունակաբար իրականացնելու են աշխատանքներ դասարաններում՝ ուղղված սովորողների սոցիալ-հուզական և փափուկ հմտությունների զարգացմանը: Դասընթացների ընթացքում շեշտադրվելու է նաև բուլինգի ռիսկերը ճանաչելու և սովորողների նկատմամբ բուլինգի իրավիճակներին արդյունավետորեն արձագանքելու մեխանիզմները: Դասընթացներն ու աշխատանքները իրականացվելու են ծրագրի շրջանակներում մշակված և հանրակրթական ուսումնական հաստատություններին տրամադրված «Փափուկ հմտությունների զարգացումը՝ որպես բուլինգի կանխարգելման և հաղթահարման գործոն» ձեռնարկը, որն հասանելի է նաև էլեկտրոնային տարբերակով: Ձեռնարկը երաշխավորվել է գործածության ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի հունիսի 12-ի N1070-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:



Նկար 1

Առաջին փուլ

Ծրագրի առաջին փուլում իրականացվող հետազոտական աշխատանքներում ներգրավված են եղել 2-րդ, 5-րդ և 10-րդ դասարաններում սովորող 453 աշակերտներ:

5-րդ դասարան՝ 205 աշակերտ

2-րդ դասարան՝ 186 աշակերտ

10-րդ դասարան՝ 62 աշակերտ

Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ 5-րդ և 10-րդ դասարաններում սովորող աշակերտների 73%-ը ընդհանուր առմամբ տեղեկացված է բուլինգ երևույթի, դրա հիմնական տեսակների և դրսևորման ձևերի վերաբերյալ (հավելված 1): 2-րդ դասարանում սովորող աշակերտների մեծամասնությանը տերմինն անծանոթ է, սակայն երևույթի վերաբերյալ առկա են որոշակի պատկերացումներ:

Առաջին փուլում իրականացված հետազոտության շրջանակներում աշխատանքային խմբի կողմից կազմված գործիքակազմի միջոցով ուսումնասիրվել են նաև դպրոցներում **անվտանգ և վտանգավոր միջավայրերը** (հավելված 2): Արդյունքում պարզ է դարձել, որ հետազոտվող բոլոր դասարաններում սովորող աշակերտների կարծիքով դպրոցում որպես **վտանգավոր միջավայր հանդես են գալիս զուգարանը, միջանցքը և խաղահրապարակը**, եթե դրանք մեծահասակների վերահսկողությունից դուրս է, **իսկ անվտանգ միջավայր սովորողները համարում են դասարանը:**

Գծապատկեր 1. Դպրոցում վտանգավոր միջավայրերը՝ ըստ աշակերտների



Առաջին փուլում իրականացված հետազոտության միջոցով ծրագրի շրջանակներում պարզվել են նաև դպրոցում և դասարաններում առավել տարածված **բուլինգի դրսևորումները:** Ընդհանրացնելով սովորողների կողմից տրված պատասխանները՝ կարող ենք ասել, որ **խոսքային բուլինգն** առավել տարածված է բոլոր դասարաններում, սակայն սովորողները բարձրաձայնել են **նաև ֆիզիկական և սոցիալական բուլինգի** դրսևորման մասին, **տնտեսական բուլինգի** վերաբերյալ նշել են քիչ թվով սովորողներ:

Գծապատկեր 2. Դպրոցում անվտանգ միջավայրերը՝ ըստ աշակերտների



Ծրագրի առաջին փուլն ամփոփվել է բուլինգի դրսևորման առանձնահատկությունների՝ մասնավորապես թիրախային խմբերում ընդգրկված սովորողների վերաբերյալ տեղեկույթի հավաքագրումով: Արդյունքում այն հարցին, թե ***«Դասարանում ո՞ր երեխաներն են առավել հաճախ ենթարկվում***

բուլինգի» սովորողները նշել են, որ *թույլերը, կամ նրանք, ովքեր չեն կարողանում իրենց պաշտպանել, վատ և գերազանց սովորող, չշփվող, սոցիալապես անապահով ընտանիքների, ֆիզիկական և հոգեբանական խնդիրներ ունեցող, ինչպես նաև այն աշակերտները, որոնք, օրինակ կրում են ակնոց, բարձրահասակ են կամ ցածրահասակ* և այլն: Սովորողների 50%-ը որպես բուլինգի հավանական ենթարկվողներ նշել է ֆիզիկապես թույլ երեխաներին, 30%-ը հոգեպես թույլ երեխաներին, 10%-ը նշել են, որ անձը կարող է հաճախ բուլինգի ենթարկվել իր արտաքին խնդիրների պատճառով, իսկ մնացած 10%-ը շփման հմտությունների բացակայության պատճառն է համարում բուլինգի ենթարկվելու պատճառ:

Երկրորդ փուլ

Ծրագրի երկրորդ փուլում իրականացվել են բուլինգի կանխարգելման և առաջին փուլում բացահայտված խնդիրներին արձագանքման գործընթացներ:

Բոլոր երեք դպրոցներում, այն ծրագրի շրջանակներում ընդգրկված դասարաններում դասավանդող ուսուցիչների շրջանում իրականացվել են իրազեկող միջոցառումներ, որոնք հնարավորություն են տվել ուսուցիչներին ընդհանուր գաղափար կազմել բուլինգի դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ, թե ինչ է բուլինգը, որոնք են բուլինգի տեսակները, ներգրավված մասնակիցները և դրա հետևանքները, ինչպես նաև տիրապետել բուլինգի կանխարգելման և հաղթահարման գործիքակազմի: Նմանօրինակ դասընթացներ իրականացվել են նաև աշակերտների և նրանց ծնողների համար:

Նախորդ փուլի արդյունքների հիման վրա դպրոցներում ձևավորվեց բուլինգի կանխարգելման հարցերով զբաղվող երկու հանձնաժողով՝ Գնահատող և Արձագանքող: **Գնահատող հանձնաժողովում** ընդգրկված էին՝ դպրոցի հոգեբանը, ուսուցիչ - խորհրդատուներ և բարձր դասարաններում սովորող աշակերտներ: **Արձագանքող հանձնաժողովում՝** ուսումնական հաստատության ղեկավարը, սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, հոգեբանը և ցանկացած այլ անդամ, ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովների անդամները ծանոթացել են բուլինգի բուլինգի վարքագծի գնահատման չափանիշներին և բուլինգի դեպքերին արձագանքելու ալգորիթմին (հավելված 3 և 4):

Նախևառաջ Գնահատող հանձնաժողովում ընդգրկված, բարձր դասարաններում սովորող աշակերտներն այս փուլում 2-րդ, 5-րդ և 10-րդ դասարաններում իրականացրել են հերթապահություններ՝ զուգահեռ դիտարկման թերթիկներ կիրառելով, վերհանելով դասարաններում առկա բուլինգի դրսևորումները և բացահայտելով խոցելի խմբերում ընդգրկված սովորողներին, որից հետո ստացված տեղեկույթով կիսվել են դպրոցի հոգեբանի և ուսուցիչ - խորհրդատուների հետ՝ մշակելով արձագանքման համապատասխան մեխանիզմներ:



Քանի որ նախորդ փուլերի ընթացքում, որպես վտանգավոր միջավայր, սովորողներն առանձնացրել էին հատկապես միջանցքները, ծրագրի շրջանակներում

ընդգրկված դպրոցների միջացքներում ներդրվեց մի քանի գաղափար՝

- **Հերթապահություն** - նոյեմբեր ամսից սկսած՝ միջանցքներում **հերթապահություն էին իրականացնում բարձր դասարաններում սովորող աշակերտներ,** ովքեր կրում էին հատուկ տարբերանշաններով հագուստներ կամ ժիլետներ՝ վերահսկելով միջանքներում անվտանգ միջավայրի առկայությունը:
- **Միջանցքների հարմարեցումներ** - բացի այդ, միջանցքներում ներդրվեցին նաև **ժամանցային, կրթական, ուսուցողական** բնույթի խաղեր, ինչը հնարավորություն տվեց սովորողների արդյունավետ զբաղվածությունն ապահովել դասամիջոցներին:
- Այս փուլում 2-րդ դասարանում սովորող աշակերտների շրջանում ներդրվեց նաև **«Դա ինձ դուր չի գալիս» արտահայտության կիրառումը**. մասնագետների ուղղորդմամբ երեխաները սովորեցին կիրառել արտահայտությունը ամեն անգամ, երբ դասընկերներից որևէ մեկի վարքն իրենց համար անցանկալի կլիներ, արդյունքում հնարավորություն ընձեռնվեց խուսափել ֆիզիկական և վերբալ բուլինգի կիրառման դեպքերից:

Ծրագրի այս փուլում Գնահատող և Արձագանքող խմբերի անդամների օգնությամբ իրականացվեցին անհատական և խմբային աշխատանքներ՝ ուղղված բուլինգի զոհ դարձած երեխաների հոգեբանական հզորացմանը, սոցիալական շփման շրջանակի մեծացմանը, դասարաններում **պաշտպանական խմբերի ընդլայնմանը**: Հատուկ աշխատանքներ են տարբել նաև այն սովորողների հետ, ովքեր հանդես էին գալիս բուլերի դերում: Աշխատանքներն իրականացվել են ՀՄԿ-ի փորձագետների կողմից տրված բուլինգի վարքագծի գնահատման չափանիշների (կարիքներ և ռիսկեր) հիման վրա (հավելված 3):

Երրորդ փուլ

Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման մեկ այլ կարևոր ռազմավարություն էլ սովորողների սոցիալ-հուզական և/կամ փափուկ հմտությունների զարգացման վրա կենտրոնանալն է: Սոցիալ-հուզական հմտություններն օգնում են բոլոր նրանց, ովքեր ներգրավված են բուլինգի մեջ և կարող են հեշտությամբ կիրառվել դպրոցում: Ուսումնական ծրագրերը, որոնք սովորեցնում են սոցիալ-հուզական հմտություններ, օգնում են ստեղծել ֆիզիկապես և հուզական առումով ապահով դպրոցական միջավայր և նույնիսկ բարձրացնել սովորողների կրթական ձեռքբերումները:

Ծրագրի երրորդ փուլում անհրաժեշտ էր, որ ուսուցիչները վերապատրաստվեն՝ սոցիալ հուզական ուսումնառության գործընթացն ապահովելու, ինչպես նաև ռիսկերը ճանաչելու և սովորողների նկատմամբ բուլինգի

իրավիճակներին արդյունավետորեն արձագանքելու համար, ներառյալ ուսուցիչ-սովորող կամ ծնող-սովորող իրավիճակները:

Աղյուսակ 1

Սոցիալ-հուզական հմտություններ + օգուտներ ըստ բուլինգի դերերի

Սոցիալ-հուզական հմտություններ	Բուլինգի ենթարկվող	Բուլինգի ենթարկող	Ականատես
	Քիչ հավանական է, որ կենթարկվեն բուլինգի կամ վնաս կկրեն բուլինգից:	Քիչ հավանական է, որ կենթարկեն բուլինգի:	Ավելի հավանական է, որ համապատասխան արձագանք կտան
Ապրումակցում		✓	✓
Հուզական կարգավորում	✓	✓	
Սոցիալական խնդիրների լուծում	✓	✓	✓
Ընկերական փոխհարաբերությունների կառուցում	✓	✓	✓
Ինքնավստահություն	✓		✓

Այս փուլի աշխատանքները սկսված են և շարունակվելու են մինչև տարվա վերջ:

Հետագա աշխատանքներ

Վերոհիշյալ դպրոցներում Բուլինգի կանխարգելման և արձագանքման մեծանիզմներ ներդնելու գործընթացը ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել աշխատանքները մինչև 2024-2025 ուսումնական տարվա ավարտը, մասնավորապես իրականացնելով հետևյալ աշխատանքները.

- աշխատանք միտված ուսուցիչների և սովորողների սոցիալ-հուզական հմտությունների զարգացմանը,

- Ծնողի պայմանագրում կատարել որոշակի փոփոխություններ՝ մեծացնելով ծնողների ներգրավվածությունը բուլինգի կանխարգելմանն ուղղված ջանքերում:
- Աշխատանք դպրոցի ղեկավար կազմի հետ՝ ուղղված հաշվետվողականության մեխանիզմների ներդրմանը: Նախատեսվում է, որ կիսամյակում առնվազն մեկ անգամ տնօրենը մանկավարժական խորհրդին կներկայացնի իրեն զեկուցված բուլինգի դեպքերի և դրա հիման վրա իրականացված հակաբուլինգային գործողությունների մասին:
- Պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում:

ՀԱՐՑԱԹԵՐԹ 1. ԻՐԱՁԵԿՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԻՔ

1. Սովորողի անունը և դասարանը.

Անուն, ազգանուն _____Դասարան_____

2. Ի՞նչ է բուլինգը:

3. Բուլինգի ի՞նչ տեսակներ գիտեք:

4. Եղե՞լ է երբևէ, որ Ձեր դպրոցում ականատես լինեք բուլինգի դրսևորման որևէ ձևի:

5. Կոնկրետ ո՞ր տեսակին եք հանդիպել:

6. Եղե՞լ է, որ մասնակից եք դարձել բուլինգի որևէ դրսևորման:

7. Եթե այո, ու՞մ դերում եք հանդես եկել:

8. Ըստ Ձեզ, ովքե՞ր են առավել հաճախ դառնում բուլինգի ենթարկվողներ:

9. Ըստ Ձեզ՝ ի՞նչ է անհրաժեշտ անել դպրոցում բուլինգի երևույթները կանխարգելելու համար:

Հավելված 2

ՀԱՐՑԱԹԵՐԹ 2. ԴՊՐՈՑՈՒՄ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Թերթիկը լրացնողի տվյալներ՝

Անուն, ազգանուն_____Պաշտոն/Դասարան_____

2. Ըստ Ձեզ՝ ո՞րն է ամենաանվտանգ վայրը դպրոցում (խնդրում ենք մեկնաբանել ընտրությունը).

Վայրը	Նշում	Համառոտ մեկնաբանություն
Խաղահրապարակ		
Դասարան		
Միջանցք		
Զուգարան		
Դպրոցական ավտոբուս		
Ճաշարան		
Դահլիճ		
Այլ		

2. Ըստ Ձեզ՝ ո՞րն է ամենավտանգավոր վայրը դպրոցում, որտեղ հաճախ են տեղի ունենում բուլինգի դրսևորումներ, վեճեր, ծեծկռտուքներ (խնդրում ենք մեկնաբանել ընտրությունը).

Վայրը	Նշում	Համառոտ մեկնաբանություն
Խաղահրապարակ		
Դասարան		
Միջանցք		
Զուգարան		

Դպրոցական ավտոբուս		
Ճաշարան		
Դահլիճ		
Այլ		

Հավելված 3

ԲՈՒԼԻՆԳԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ԿԱՐԻՔՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ)

	□ Թեթև	□ Միջին	□ Չափավոր	□ Ծանր
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	• Ֆիզիկական սպառնալիքի կամ վնասի բացակայություն • Աննշան ծաղրանքներ և պիտակավորումներ	• Աննշան ֆիզիկական սպառնալիքներ կամ ագրեսիա • Չափավոր ծաղր ու պիտակավորումներ	• Աննշան ֆիզիկական ագրեսիա և վնասվածքներ • համատարած և կրկնվող ծաղրանք, նվաստացում, ծաղրող պնդումներ • Սեռական բնույթի վիրավորանքներ կամ սպառնալիքներ • իրերի գողություն կամ վնասում	• Բժշկական միջամտություն պահանջող ծանր ֆիզիկական վնասվածքներ կամ հոգեբանական վնաս • Անպատշաճ սեռական վարքագիծ • Հայտարարություններ, որոնք կարող են դրդել ինքնավնասման
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	□ Թեթև	□ Միջին	□ Չափավոր	□ Ծանր
	• Խորհուրդներ և ցուցումներ	• Հաղթահարելու համար պահանջվում է նվազագույն աջակցություն	• Հաղթահարելու համար անհրաժեշտ է մասնագիտական կայուն աջակցություն	• Պահանջվում է հոգեկան առողջության մասնագետների և/կամ ոստիկանության միջամտություն
ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	□ Թեթև	□ Միջին	□ Չափավոր	□ Ծանր
	• Տեղի է ունեցել առաջին անգամ • Հազիվ թե կրկնվի	• Տեղի է ունեցել երկրորդ անգամ • Հավանաբար կրկնվելու է	• Տեղի է ունեցել երեք անգամ • Հավանաբար կրկնվելու է	• Տեղի է ունեցել չորս և ավելի անգամներ • Սպառել է հայտնաբերված բոլոր դրական կարգապահական միջոցները՝ առանց որևէ բարելավման

**Չափանիշ՝ Թեթև = 1, Միջին = 2, Չափավոր = 3, Ծանր = 4*

Հավելված 4

ԲՈՒԼԻՆԳԻ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ԱԼԳՈՐԻԹՄ